



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«ՁԸ» ԽՈՒԿԱՔԻ... 2018 թվականի №... 96-ՆԿ...

«ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-Ի  
ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով 2018 թվականի հուլիսի 18-ին կայացած վարչական վարույթի արդյունքները.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Դադարեցնել «Հողային ռեսուրսների զարգացման ընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ՀՀ Կոտայքի մարզի Զրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի հյուսիսային 3-րդ տեղամասի և ՀՀ Արարատի մարզի Կարմիրսարի մերգելային կրաքարերի հանքավայրի 4-րդ տեղամասի ընդերքօգտագործման իրավունքը:
2. Ուժը կորցրած ճանաչել 2013 թվականի փետրվարի 6-ի օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/438 թույլտվությունը, լեռնահատկացման ԼՎ-438 ակտը, 2012 թվականի դեկտեմբերի 18-ի օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/379 թույլտվությունը, լեռնահատկացման ԼՎ-379 ակտը և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-438 և ՊՎ-379 պայմանագրերը:
3. Ընդերքի գործակալության պետին՝
  - 1) 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.
  - 2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:
6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:
7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ